ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՈՒՍԱԼԵՌԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ
АРМАВИР МАРЗ
МЕРИЯ СЕЛА
МУСАЛЕР

REPUBLIC OF ARMENIA, ARMAVIR MARZ, VILLAGE HALL OF MUSALER

«24» մայիսի 2011թ  Հեռ. 0231 6-47-22
թիվ ...96....

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Ի կատարումն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի վեցերորդ մասի՝ Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի մայիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 2-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» թիվ 2-Ն որոշումը:
Միաժամանակ հայտնվում է, որ նշված որոշումը սահմանված կարգով ներկայացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության:

Առդիր՝ 2 թերթ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 5434-11
«26» 05 2011թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
## ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

*«17»մայիսի 2011թ.* *թիվ 2-Ն*

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.*

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու 2010թվականի նոյեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մուսալեռի գյուղական համայնքի 2011 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝*

*1) Վարչական բյուջեի 01 բաժին 1 խումբ 1 դաս **4212** /էներգետիկ ծառայություն ներ/ հոդվածից պակասեցնել **300.0** հազար դրամ,*

*2) Ֆոնդային բյուջեի 01 բաժին 1 խումբ 1 դաս 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ հոդվածից պակասեցնել **3500.0** հազար դրամ,*

*3)Ֆոնդային բյուջեի 01 բաժին 1 խումբ 1 դաս 5122 /վարչական սարքավորումներ/ հոդվածից պակասեցնել **1000.0** հազար դրամ,*

*4) Վարչական բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս հոդված **4251** /շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ նախահաշվով նախատեսված ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություն,**500.0** հազար դրամ դեկտեմբեր ամսից տեղափոխել մայիս ամիս:*

*5) Ֆոնդային բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս 5113 /շենքերի և շինությունների կապ.վերանորոգում/ հոդվածին ավելացնել **3000.0** հազար դրամ,*

*6) Ֆոնդային բյուջեի 01 բաժին 6 խումբ 1 դաս 5122 /վարչական սարքավորումներ/ հոդվածին ավելացնել **1390.0** հազար դրամ,*

*7) Ֆոնդային բյուջեի 01բաժին 6 խումբ 1 դաս հոդված 5131/ աճեցվող ակտիվներ/ ավելացնել 110.0 հազար դրամ,*

*8) Ֆոնդային բյուջեի 01բաժին 6 խումբ 1 դաս հոդված 5134/նախագծահետազոտական ծախսեր/ նախահաշվով նախատեսված ժամանակացույցի մեջ կատարել փոփոխություն, [illegible]0.0 դրամը դեկտեմբեր ամսից տեղափոխել մայիս ամիս,*

9) Վարչական բյուջեի 10բաժին7 խումբ1 դաս հոդված 4729 /այլ նպաստներ բյուջեից/ ավելացնել 300.0 հազար դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Խ. Մկրտումյան | /ստ./ | /ստ./ | |
| Ս. Զաքևոսյան | /ստ./ | /ստ./ | |
| Գ. Խապիրյան | /ստ./ | /ստ./ | |
| Դ. Գևորգյան | /ստ./ | /ստ./ | |
| Ն. Գրիգորյան | /ստ./ | /ստ./ | |
| Ա. Բախտավորյան | /ստ./ | /ստ./ | |

Համայնքի ղեկավար Է. Հովհաննիսյան

2011թվականի, մայիսի 17

գ. Մուսալեռ